

Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻԶԻՐՅԱՆ

Ծնվել է 1926 թվականի հուլիսի 15-ին Դամասկոսում (Սիրիա): Նախնական կրթությունը ստացել է տեղի ազգային Թարգմանչաց վարժարանում:

1940 թվականին ընդունվում է Անթիլիասի Դպրեվանքի Ժառանգավորաց վարժարան և 1944 թվականին Տ. Եփրեմ արքեպիսկոպոսից ձեռնադրվում է սարկավագ:

1947 թվականին ավարտում է Դպրեվանքի ընծայարանի բաժինը և նույն թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվում Տ. Դերենիկ եպս. Փոլադյանի կողմից:

Այնուհետև Կաթողիկոսարանից ներս վարում է մի շարք պաշտոններ, լինում է «Հասկ» պաշտոնաթերթի վարիչ, կալվածոց տեսուչ, Դպրեվանքի և Անթիլիասի ազգային Մեսրոպյան վարժարանի ուսուցիչ:

Ապա Տ. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցի բարեհաճ արտոնությամբ և ԱՄՆ-ի հայոց առաջնորդ Տ. Տիրան արքեպ. Ներսոյանի հրավերով ժամանում է Ամերիկա և ստանձնում մի շարք եկեղեցիների հոգևոր հովվության պաշտոնը, այդ թվում՝ Նյու Յորքի Ս. Խաչ, Մայամիի Ս. Հովհաննես Մկրտիչ, Ֆիլադելֆիայի Ս. Սահակ—Ս. Մեսրոպ, Նուարկի Ս. Աստվածածին, Ուստրի Ս. Փրկիչ, Դետրոյտի Ս. Հովհաննես Մկրտիչ, Բոստոնի և Տորոնտոյի (Կանադա) Ս. Երրորդություն եկեղեցիների:

1958 թվականին ստանում է մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն ԱՄՆ-ի հայոց առաջնորդ Տ. Մամբրե արքեպ. Գալֆայանի կողմից, ապա ծայրագույն վարդապետական աստիճան՝ ԱՄՆ-ի հայոց առաջնորդ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանից:

Որոշ ժամանակ նշանակվում է ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդական փոխանորդ և խմբագրում «Հայաստանեայց Եկեղեցի»-ն և աշխատակցում «Արմինյոն Կարտիրն» երիտասարդաց պաշտոնաթերթի խմբագրության մեջ և վարում է թեմի կիրակնօրյա դպրոցների տեսչությունը: Անդամակցում է թեմական խորհրդին:

Ատենապետի պաշտոն է վարում Ամերիկայի արևելյան թեմի Դպրաց դասերու Միության կեդրոնական վարչության մեջ:

Տ. Եղիշե եպիսկոպոսը իր վարչական-հովվական պաշտոնավարության ընթացքում հետևում է նաև աստվածաբանական, երաժշտական և անգլերեն լեզվի դասընթացներին, Նյու Յորքի եպիսկոպոսական, աստվածաբանական դպրոցում ու Բոստոնի համալսարանում:

1982 թվականին Հայոց Հայրապետի բարեհաճ արտոնությամբ նշանակվում է Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ:

1982 թվականի փետրվարի 14-ին Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվում Անգլիայի հայոց թեմի վրա: